# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

## ԺՈՒՌՆԱԼԻՍՏԻԿԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԽՈՐՀՐԴԻ

**2026 թ. հունիսի 9-ի հարցման կարգով թիվ 10 նիստի**

ԵՊՀ Ժուռնալիստիկայի ֆակուլտետում տեղի ունեցավ հարցման կարգով նիստ, որի ընթացքում քվեարկության դրվեցին հետևյալ հարցերը.

ա) Ժուռնալիստիկայի պատմության, տեսության ու պրակտիկայի ամբիոնի առկա ուսուցման անվճար համակարգի երրորդ տարվա ասպիրանտ Գարիկ Կարոյի Հարությունյանին ատեստավորելու հարցը (թեկնածուական ատենախոսության թեման՝ «Արհեստական բանականության կիրառման առանձնահատկությունները հայաստանյան առցանց մեդիայում»):

բ) ՀՀ ԿԳՄՍՆ Գիտության կոմիտեի կողմից ֆինանսավորվող 24SSAH-5H001 «Հայ պարբերական մամուլը՝ որպես պատկերաբանական գործիք (19-րդ դարի երկրորդ կես – 20-րդ դարասկիզբ)» գիտական թեմայի 2025–2026 թթ. գործունեության վերաբերյալ հաշվետվության հաստատում:

Հարցման կարգով նիստին մասնակցած գիտխորհրդի 14 անդամներ քվեարկել են «կողմ»:

<u>ՈՐՈՇՈՒՄ.</u>- ա) Հաշվի առնելով կատարված աշխատանքի ծավալը և քվեարկության արդյունքները՝ Գարիկ Կարոյի Հարությունյանին ատեստավորել:

բ) Հաստատել «Հայ պարբերական մամուլը՝ որպես պատկերաբանական գործիք (19-րդ դարի երկրորդ կես – 20-րդ դարասկիզբ)» գիտական թեմայի 2025–2026 թթ. գործունեության վերաբերյալ հաշվետվությունը:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ Ն. Ն. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ Զ. Զ. ՍԱՐԳՍՅԱՆ